

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

17 ԱՊՐԵԼ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արհեստական վարժարան. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ :—Ուրուագիծներ —Վայրկենական. «Պատերիկ
եմ. Կիւլպենկեան». ԳԱՄԵՐ :—Ֆլորբելու Ակումբ. ԲՕԼ ՊՈՐԹԷ. քարզմ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱԾ :
—Միես նոյնը (Բանաստեղծութիւն) Մ. Ա. Պարսամեան :—Գիտական Գրոնիկ. ՆՈՒՊԱՐ :—
Կարեն (Նորալեզ) ՇԱՀԱՐԻԿ :—Նորերու բաժինը (Ներու ոտանաւոր) :—Այժմեւորութիւններ.
«Թօփոյէ Լոնտոն». X :—Խմբագրական Նօթեր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար հառսուն դր. 5.
Եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 րուպի : Թղթաստանական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու
քիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առսու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով :

Ձեռն-ԲԷ ԿԸ ՇԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیہ غلطہ (ماسیس) غرضی اداره سی

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantino ple

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդորիմ ներքեւ, երաշխաւորեալ դրամազուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար. 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի սմէշն. պատուաւոր եւ սմէշն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ շուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վաւելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ՝ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-
րածաւթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օրէլա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թափառները, Նանս
Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանզի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թափառները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառափնիէնի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Մովայիս Փոխադրութեանց,
ֆրանսական թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին
վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԴԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց
համար: Դ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային
ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մասնաւոր փող, Պէլուք Երլաղ Խան, թիւ 14, Լա Դօնֆրանս
ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիխի
վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնա-
րարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագիրն	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագիրն	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեալ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ ջանաբաժիններու բաւոյման (accumulation des bônéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապա-հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Քաթրանք Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Խալաթի իման: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԻ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպոլատան

Բերա, Մեծ Փողոց, Քաղսիւ, քիւ 61

Զբօսանքան արքայական


Պալատական ամէն օր ակոյալի առէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուածն որ եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալատական կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյա-
նելը: Ցորեկները ակոյալ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կ'առէն կ'առնուէ:

Աղօթանքուն ձիւ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւազաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթեական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ մնասուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ ԳԷ-
նօղներէն՝ 100ին 15 զեղչով:

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը Հիգանուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ)

Թորախտ, պրօնչիտ, հալ, հարբուխ և բարակացաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրածա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է: Առաջին անգամ տունուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Ամեն տարի հաշարաւոր տղայք մահուանէ աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ևս կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Վերելու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Միշտ վրան տոյս պատկերով վարդապոյն փաթիթի մը մէջ կը գտնուի:

Հիշելու փայլ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր գեղարքները և գեղարքաները կը ծախեն:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ՈՒՅԻ ԿԵԱՆՖԻ, ՕԴԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ ԲՈՇԱԿԻ ՆԻՐՈՒՆ

VICTORIA
DE
BERLIN

ՎԻՔՏՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՖԻ ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններուն վճարումները շարժական մասնավճարներով տեղի կ'ունենան, սկսեալ 5 ղրուշէն

Ապահովագրեալ գումար 190 շիք Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 190 շիք » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 28ին արեւմտեան Եւրոպայի եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա եւ Բրէտի Իոննէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՄԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԷՃԵԱՆ

Պոլիս Բաքրեքոզլու խան
թիւ 45 եւ 45 Կ.

ՄԱՍԻՍ

547 ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 16

17 ԱՊՐԻԼ 1904

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մասիսի ընթերցողները կը յիշեն թերևս որ քանի մ'ամիսներ յառաջ, անցեալ տարւոյ թիւերէն միոյն մէջ, ազնիւ Երուանդ էֆ. Չալուչեան, որ ուսուցիչ է Պետական Արհեստական վարժարանին մէջ (Մէքթէպը Սանայի), հաճած էր վեր առնուլ իմ մէկ յօդուածս, զոր հրատարակած էի Սուրհանդակի մէջ և յորում ես, խօսելով այն քննադատութեանց ու պահանջմանց մասին որք սովորաբար մեր նախակրթարանաց չրջանաւարտներուն՝ վկայականաց բաշխման հանդէսին առթիւ տեղի կ'ունենան ազգային օրաթերթից միջոցաւ, ի վեր կը հանէի անոնց անիրաւութիւնը և կը մատնանշէի ճշմարիտ միջոցները գոհացում տալու ժողովրդեան այն ակնկալութեան որով կ'ըզձայնա որ նախակրթարաններէն ելնող սերունդը կարենայ գործ ու զբաղում գտնել դիւրաւ ու մօտաւոր ապագայի մը մէջ օգտակար դառնալ իրեն և իրեններուն։ Այդ միջոցներուն մէջ կը շեշտէի արհեստական ու աւելտրական դպրոցներու հաստատութիւնը, արհեստական ուսուցման մը (enseignement technique) յաջորդումը նախակրթական ուսմանց, ինչպէս ի գործ կը դրուի Եւրոպիոյ զանազան երկիրներուն մէջ, ուր լրացուցիչ դպրոցներ, արհեստական, մասնագիտական վարժարաններ իրենց գիրկը կը բանան նախակրթարանաց դուրս տուած մատաղ սերունդին՝ անոնց կրթութիւնը գործնական հրահանգներով մշակելու և արհեստից ուսուցմամբ իրենց կեանքը շահելու գործը դիւրացնելու համար։

Ուրախ ենք որ Երուանդ էֆ. Չալուչեան մասնաւոր ուշադրութիւն նուիրեց մեր

յօդուածին, երկարօրէն պարզելով իր կատարեալ համամտութիւնը մեզ հետ, իր փափաքներն արհեստական կրթութեան հաստատութիւններ հիմնուած տեսնելու մեր մէջ և այս ուղղութեամբ իր ըրած ջանքերը հայ մեծատունի մը քով որ զոհողութիւններ ընելու տրամադրութիւններ յայտնած էր, ծրագիր ուզած և ստացած էր Չալուչեան էֆէնտին, թէ և այս ամիսայն գործնական արդիւնքի մը չէր յանգած։ Ի՞նչ ատեն վերջ երուանդ էֆէնտին բարեհաճած էր մասնաւոր հրաւէր մ'ուղղել ինձ յայց ելնելու Պետական Արհեստական վարժարանին, ուր կը դասախօսէ, յուսով անշուշտ որ ինչ որ պիտի տեսնէի՝ պիտի զօրացնէր համոզումներս ու յորդորէր զիս մղում տալու արհեստական կրթութեան զաւարարին մեր մէջ, որուն յաջողութեան աջակցելու արդէն ինքն ամենաբաւական փափաք կը տածէ իր մէջ։

Իր հայթայթած դիւրութեանց շնորհիւ, Զատիկ արձակուրդին մէջ օր մը բարեբախտութիւնը ունեցանք այցելու Պետական այդ կարեւոր հաստատութիւնը, մեր վարժարանի Ընդհ. Հսկողին և բարձրագոյն դասարանի մի քանի ուսանողաց ընկերակցութեամբ։ Սիրալիր ընդունելութիւն մը գտանք ներքին արհեստական տեսուչ (directeur technique) գաղիացի Պ. Լէոն Ֆօռի կողմէ, որ իսկոյն ցոյց տալ սկսաւ մեզ ուսանողներու գծագրական աշխատութիւնները, շատ յաջող, շատ մաքուր, շատ խնամեալ։ Ուսանողները պարզ երկրաչափական գծագրութիւններէ կ'սկսին և հետզհետէ ի գործ կը դնեն գծագրական գունաւոր ճարտար աշխատութիւններ, բարձրագոյնք պարագելով

մեքենայներու ու անոնց մասերուն բացատրուեալ դժագորութիւնով, ինչպէս նաեւ դարդարուն ու նրբարուեստ կահերու: Աշակերտք, ամէն դասարանաց մէջ, ամէն օր մէկ մէկ ժամ ունին դժագորութեան համար: Մեր դոհունակութիւնը կը յայտնենք Ազնիւ Տեսչին, որ, իսկոյն, իր աշխատութեան սենեկին հետ հաղորդակցող փոքրիկ դուռ մը բանալով, կը հրաւիրէ զմեզ կահագործութեան ընդարձակ արհեստարանը օր կը պարզի մեր առջև:

Դպրոցը ի սկզբան կը պարունակէր բաղմաթիւ արհեստներ, կօշիկարութիւն, պարզ ատաղճագործութիւն, դերձակութիւն եւայլն, բայց, վերջերս ի գործ դրուած բարեկարթեամբ մը, ուսանելի առարկայները կեդրոնացած էին նուրբ կահագործութեան և մեքենագործութեան վրայ, պարզ արհեստները աշակերտաց մէկ մասին հետ փոխադրուելով որբանոցի մէջ:

Լայն սրահին ամէն կողմերը գործասեղաններ, որոց ձաշկե ոտքի վրայ կ'աշխատին առանձին կամ երկուք կամ երեքն ի միասին արհեստաւոր ուսանողները: Այլ և այլ աղագութեանց կը վերաբերին, թէև մեծամասնութիւնը թուրք է: Մերթ ամբողջ գործ մը մի մըակ աշկերտի գործ է, ինչպէս տեսանք շինուելու վրայ եղող զեղակերտ մատենադարան մը, իր ճախարակեայ սրահներով, քանդակագործ զարդերով, իր ամէն մասերով միակ ձեռքի մ'արդիւնք: Բայց յաճախ մեծ գործի մը այլ և այլ մասունք բաժանուած են մէկէ աւելի գործողներու մէջ. ումանք կը յղկեն փայտերը, այլք կը ճախարակեն, ումանք նրբենի արարիկ զարդերը կը քանդակեն: Ամէնքը գործունէութեան մէջ են. այն օր, Աւագ Շաբաթ, քրիստոնեայներու արձակուրդ տրուած է, անոր համար աստ անդ կը տեսնուին դատարկ գործասեղաններ: Ազնիւ Տեսուչը կ'ընկերանայ մեզ, բացատրութիւններ կուտայ, մեզ կը ներկայացնէ վարպետները որք կը պատէին գործասեղաններուն մէջտեղ, ասոր անոր քով երթալով, ասոր խրատ մը տալու, անոր ղիտողութիւն մ'ընելու, զամէն հսկելու: Աշխատութեան լայնատարած սրահին մէջ

խօսելու ձայն չկայ, միայն ճախարակները կը ճռնչեն, միայն խարտոց, քերիչ, կտրիչ ձայն ու ժխոր կը հանեն: Ինչ ինչ լրման հասած գործերու առջև կանգ կ'առնունք հիանալու համար աշխատութեան նրբութեան ու կատարելութեան վրայ. հոս սեղան մ'է ճախարակեայ ոլորածոյ ոտքերու վրայ հաստատուած, ողորկ ու փայլուն. հոն փոխալ մը՝ զեղաքանդակ շրջանակի մը մէջ դրուած հայելիով. ասդին համակ արարիկ քանդակներով զարդարուն նրբարուեստ դրադարան մը. անդին գրասեղան, աթոռներ, սատափով դրուագուած սեղանիկներ կամ արկղիկներ եւայլն:

Մի և նոյն ատեն պատուական Տեսուչը օրուան ժամերուն գործածութիւնը կը բացատրէ մեզ. — Աշակերտք, թուով իր 224, որոց 200ը ներքին և 24ը արտաքին, ամէն առաւօտ 1 ժամ սերտողութիւն և 2 ժամ դաս ունին. յետոյ գործարանական աշխատութիւն մինչև կէս օր: Ծալէն վերջը 1 ժամ գժագործութիւն, յետոյ 4 ժամ դարձեալ գործարանական աշխատութիւն որուն կը յաջորդէ երեկոյեան սերտողութիւնը: Հինգ դասարաններ կան, ու դասեր մաթեմատիքի որ մինչև Եռանկիւնաչափութիւն և Գծագրական երկրաչափութիւն յառաջ կը մղուի, դասեր քնական գիտութիւններու, մեքենական գիտութեան, ինչպէս նաեւ օսմաներէն լեզուի և դրականութեան: Աշակերտք ոչինչ կը վճարեն, ամէնքն ալ ձրիավարժ են. Դաւթիոյ Գոմիսիոն խանին հասոյթը ամբողջապէս յատկացուած է դպրոցին ծախքերուն:

Դեմոնստրացիոն ղեկավարած են երկաթի վրայ եղած աշխատութիւնները: Երբ հոն կ'իջնենք, Ֆրանսացի Տեսուչը, պահ մը մեր քովէն հեռանալու ատիպուած, զմեզ կը յանձնէ մեքենագիտական արհեստից մասնագէտ վարպետ ու գործապետ հայազգի Գրիգոր էֆ. Բարունակեանի զոր գովեստով կը ներկայացնէ, և որ մեր առաջնորդը կ'ըլլայ բոլոր երկաթի աշխատութիւնները մեղիցուցնելու համար: Մեքենագիտութեան սրահն ենք. ընդհանուր Շարժիչ մը կը դարձնէ բոլոր մեքենայները. երկաթ կը ծեծուի, կը

կորուի, գործիքներ կը դարձնուին, մեքենաներ կը կերտուին: Մեզ ցոյց կը տրուի նորահնար մեքենայ մը որ ցորենը կը զատէ յարդէն, աշիւը կը դարձնէ, ու միեւնոյն ատեն յարդը կը կտրէ կը մանրէ, ուտելի վիճակի մէջ դնելով: Բարունակեան էֆ. այս ճիւղին հոգին է. ինք կատարեալ արուեստագէտ մ'է, ճարտարագէտ—մեքենագէտ մը, Բարիզի մէջ ուսած ու վկայեալ, որ պահ մը զմեզ իր գրասենեակը տանելով՝ ցոյց կուտայ մեզ արագահաշուի հանճարիմաց հնարումները որ իր սրամտութեան վրայ զարմանալ կուտան: Իրեն հետեւելով կ'այցենք դարձնոցը ուր պատանի կիկղոպներ կաշմբուռն բազմիկներով բարձրացուած կռանի ուժգին է. բուսածներ կը տեղան ծծեւով հրացեալ երկաթի հատոր մը՝ ու կայծեր ցայտեցնելով որք չէկ նշոյներով կը փայփին գործարանին կէս-մթութեան մէջ: Կ'անցնինք Ձուլարանը. պատերը զարդարուած են բազմաթիւ ու բազմատեսակ երկաթեայ ու փայտեայ տիպարներով որոնցմով գետնի աւազին վրայ կը կազմուին կաղապարներ՝ ձուլելու համար այլազան թափծու գործիքներ, երկաթեայ զարդեր, անօթներ և այլն: Հոն են թղթատարական Պաշտօնէութեան գործածութեան համար նորաձոյլ նամակատուփերը որք գեղեցիկ ճաշակ մը կը յայտնեն:

Կը պատինք դասարանները որք շուրջն են զբօսավայր բակի մը, ընալուծութեան աշխատանոցը, ճաշարանը, խոհանոցը, ու Տեսուչին հետ՝ որ կը վերադառնայ մեր քով՝ ննջարանները անկողիններով որոնց անպատրաստ մաքրութիւնը մեր ուշը կը գրաւէ. կը տեսնենք նաև երկու մթերանոցները ուր կը պահուին դպրոցին կահագործական ու մեքենագործական արտադրութիւնները, իւրաքանչիւրին վրայ իր արժէքը նշանակուած: Մեր ամէն տեսածներուն համար մեր խորին գոհունակութիւնն ու շնորհաւորութիւնները կը յայտնենք աղջիւ Մ. Լէոն Յօռի ու Գրի-զոր էֆ. Բարունակեանի, և կը մեկնինք անցնելով մշակուած փոքրիկ պարտէզի մը սիրուն ածուներուն մէջէն, ու մտիկ ընելով Մ. Յօռի որ ֆրանսական արհեստական վար-

ժարաններու նախկին աշակերտաց սարքած մէկ վերջին հացկերոյթին վրայ կը խօսի այնպէս հիացմամբ որ ցոյց կուտայ թէ արհեստական կրթութեան գործին սիրահար անձ մ'է և կոչուած է շատ ծառայութիւն մատուցանել այն հաստատութեան որուն գլուխը կը գտնուի:

Յոյժ գոհունակ տպաւորութեան մը տակ դուրս ելանք արդարև այդ Հաստատութեանէն, որ պատիւ կը բերէ Կայսերական Կառավարութեան, բաղձալով որ շատնան նըմանք ու տարածուին Երկրին ամէն կողմերը: Բայց եւ անշուշտ հպատակ ժողովրդոց ալ պարտքն է, կրթասէր կառավարութեան օրինակին հետեւելով, նմաններ հիմնել մասնաւոր նուիրատուութիւններով: Եւրոպական երկրաց մէջ նման հաստատութիւնք առեւտրական ու ճարտարական նախարարութեանց խնամոց տակ կը գտնուին. ուրեմն կրնանք ըսել թէ հանրագոտ աշխատութեան դաշտ մը կայ հոս մեր վաճառական ու արհեստագէտ դասակարգերուն համար:

Ժամ է անշուշտ որ լուրջ ուշադրութիւն դարձնենք սա կէտին թէ ինչ պէտք է ըլլան կամ ընեն մեր նախակրթարաններէն ելնող տղաքը: Մեծաւ մասամբ ժողովրդեան զաւակներ, չեն կարող բարձրագոյն դպրոցաց մէջ շարունակել իրենց ուսումը և մասնագիտութեանց պատրաստուիլ: Ձեռական արհեստից ու առուտորի ասպարէզներուն մէջ պիտի փնտռեն ի հարկէ իրենց հացը, և առ այս սակայն չի բաւեր նախակրթարանաց մէջ իրենց առած ուսումը: Պէտք է որ լրացուցիչ ուսում և արհեստական ու առեւտրական պատրաստութիւն ստանան յատուկ դպրոցներու մէջ, վասն զի անօգուտ է կենալ ու պահանջել որ մեր աղջային նախակրթական յարկերը մատակարարեն այդ պատրաստութիւնը: Սանայիին նման դպրոցներ, աւելի պարզեր, առեւտրական վարժարան, ահա՛ ինչ որ պէտք են մեզ: Ինչ որ որբանոցներուն համար ընել սկսանք քիչ շատ, նոյնը պէտք է ընել, աւելի ընդարձակ ու լաւագոյն կազմակերպեալ, մեր ժողովրդեան բոլոր զաւակներուն համար: Շատ ան-

գամ կը խօսուի արհեստական և առեւտրական ասպարէզներուն մէջ մեր դրացի ժողովրդոց հետ մրցումի պէտքին վրայ. ահա՛ թէ ի՞նչ կերպով կարելի է լուծել հացի խնդիրը մեր մէջ: Գովելի է Աղքատախնամներու և Հիւանդախնամներու երեւան բերած սգեւորութիւնը, բայց պէտք է մոռնալ որ մեծագոյն դժուրութիւնն է նոյն իսկ աղքատութեան և հիւանդութեան պատճառները բառնալ կամ նուազեցնել: Անցեալները բարեկամին մէկը կ'ըսէր թէ այդ խնամատար մարմինները ծոյլերու և հիւանդներու թիւը աճեցնելու կը ծառայեն մեր մէջ: Չափազանցեալ ալ ըլլայ այս խօսքը, սա իրաւ է որ հոգեբանական մասնաւոր տրամադրութեամբ մը բերուած ենք յաւէտ հիւանդներուն խորհելու քան առողջներուն. մեր մէջ

Աղքատախնամք ալ հիւանդ աղքատը միայն տրամադիր են հոգալու և ո՛չ երբեք առողջ աղքատը: Բայց իրաւ չէ՞ որ առողջ աղքատը, ժամանակին հոգացուելով, կրնայ ղեկմնալ շատ մը հիւանդութիւններէ որոց պատճառը աղքատութիւնն է: Ժողովրդեան առողջ բայց բախտէն անօգնական թողուած տղայոց ասպագային հոգալով՝ չէ՞ մի որ կանխաւ կը խնունք թէ՛ աղքատութեան և թէ՛ հիւանդութեան շատ մը չարաբուղի աղբիւրները: Օ՛ն ուրեմն, քիչ մ'ալ առողջին համար աշխատինք, քիչ մ'ալ նախահոգակ միջոցներուն խորհելու խմաստութիւնն ունենանք:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԻՅՏ ՆՈՅՆԸ



Չհասկցուած սէրերուն դառնութիւնովն առլըցուն,
Դեռ ուզեցի տարփողել գոյութիւնդ անբասիր,
Միշտ հատնելով գըրեթէ, ամէն անգամ որ սիրուն
Զմայլելի նայուածքդ, քուրմի հուրքով կ'օծէիր:

Տառամսումէս ու վախէս բառ մը չըսի սիրային,
Մերժումներուդ հոգեմաշ սարսուռն ըզգալ չուզելով.
Թողուցի որ գուշակես փրփուրները պաշտումին,
Ու տենջանքը գրգանքիդ, — համբուրելու պապակով:

Ներանձնութեան այս հիւանդ, ջլախտաւոր սէրէն վերջ,
Դրի առի խանդերուս ըոյր թափովն անսահման,
Ինչ որ ըսել կ'ուզէի, լռութեանըս յոյսին մէջ,
Սպասումիս արդիւնքէն յուսահատած այս անգամ:

Եւ դուն սակայն, առջի պէս, չհասկցա՛ր զիս նորէն,
Կամ չուզեցիր մըտածել ասոնց վրայ պարզապէս,
Ու քերթուածներս կարդալով, ըսիր օր մը հեզնօրէն,
— «Ո՛վ է արդեօք այս կինը: որուն երգերդ կը ձօնես...»:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՊԱՏՐԻԿ ԷՖ. ԿԻԼՎԵՆԿԵԱՆ

Կիւլպէնկեան Տան պետը, որ վերադարձաւ երկարատե ուղեւորութենէ մը, եթէ իր առեւարական ու սեղանաւորական ընդարձակ գործառնութեանց բերմամբ մասնաւորապէս կը հետաքրքրէ գործի դասակարգը, իբրեւ ատենապետ Հիւանդանոցի Հոգաբարձութեան՝ ընդհանուր կերպով կը հետաքրքրէ այս համայնքը որ անկեղծօրէն գնահատած է անոր արդիւնաւոր պաշտօնավարութիւնը: Այդ ծանօթ անձնաւորութիւնը ծանօթացնելու հարկ չիկար՝ եթէ այս «Վայրկենական»ներուն սահմանը այդ ըլլար. մինչդեռ, պարզ ուրուագիծ մըն է որ կը տողանցեմ՝ այժմութիւն ունեցող պարագայ մը ըլլալով իր ժամանումը ի Կ. Պոլիս:

Պատրիկ ԷՖ. Կիւլպէնկեան, որ իր հասուն երիտասարդութեանը մէջ կը գտնուի այսօր, նոյն իսկ տասնեակ և աւելի տարիներ առաջէն կը կրէր կանխաճառ լրջութիւն մը զոր քիչերու տրուած է վայելցնել դեռատի հասակի մէջ, իր թուիս ու համակրելի դէմքը, սև խոհուն աչքերը, հատու խօսուածքը և խրոխտ քաղուածքը պատկառանք ազդելով հանդերձ, նոյն իսկ զինքը չի ճանչցողի մը, կը ծածկեն քաղցր բնաւորութիւն մը որ ընտանեկան յարկին տակ ի յայտ կուգայ, կ'ըսեն, լիովին, ջերմանոցի տաք միջնորոտին մէջ փթթող ձմրան ծաղկի մը պէս: Անկէ դուրս, իր անձնական գործառնութեանց ու զրասնեակին գլուխը, ինչպէս նաև իր պատուակալ պաշտօններուն, մասնաւորապէս Հիւանդանոցի ատենապետութեան մէջ, Պատրիկ ԷՖէնտին ի յայտ կը բերէ տոկուն կամք մը եւ խստապահանջութիւն մը, չըսելու համար խստութիւն, որ գործի մարդոց արժանիքն է. խստութիւն մը սակայն որ խրաչլի չի տար, ընդհակառակը՝ յարգանք կը ներշնչէ:

Յորաթափանց մտքի ու հասուն դատողութեան տէր՝ Պատրիկ ԷՖ. Կիւլպէնկեան մէկն է առեւտրական ու սեղանաւորական հրապարակի այն վարիչներէն որոնց զբաղման ծանրութեան ու սուղ ժամերուն վրայ դժուար է գաղափար կազմել հեռուէն, և ճիշդ այս պարագան աւելի՛ մեծարժէք կը դարձնէ զոհողութիւնը զոր սիրայօժար կընէ իր ժամանակէն ու աշխատութենէն բաժին մը նուիրելով Հիւանդանոցի գործերուն, — յարգող ու շարունակող հանդիսանալով, նաև այս առթիւ, իր հօրենական բարի աւանդութեանց:

Իր անձին ու բնաւորութեան յատկանիշը եթէ կարելի ըլլար ամփոփել միակ բառի մը մէջ, պիտի ըսէի թէ՝ պարզասիրութիւնն է: Եւ արդարեւ զինքը մօտէն ճանչցողները զիտած են իր խօսուածքին ինչպէս շարժուածքներուն, ու նոյն իսկ հագուածքին մէջ անսթեւեթութիւն մը որ ինքնայատուկ վայելչութիւն մը ունի: Կը յիշեմ որ, պզտիկ օրինակ մը տալու համար, երբ Որբանոցի արհեստարանը իր «Նախախայրիք»ը տուաւ՝ դերձակութեան և ուրիշ ճիւղերու մէջ, Պատրիկ ԷՖ. առաջին և թերեւս միակ հարուստը եղաւ մեր մէջ որ «բառըսիւ» մը ապսպրեց ու... հագաւալ: Այսպէս նաև, որչափ խիստ է Հիւանդանոցի վարչական ու մատակարարական գործերուն մէջ, նոյնքան հեղահամբոյր է՝ երբ իր պաշտօնակիցներով այցելութեան ելլայ պատսպարեալներուն որոնք իբրեւ ճշմարիտ բարերար մը կը ճանչնան զինքը. ու չեն սխալիր:

Գ.Ա.ՄԷՐ

ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ, որ երկու շաբաթ է ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, այսօր Արմաշ կը վերադառնայ՝ իր հետ տանելով Բրօֆ. Յակոբ Թօփճեանը, որ Գերմանիոյ համալսարաններուն մէջ աւարտած է իր բարձր ուսմանց շրջանը եւ Դպրեվանքի գերմաներէնի ուսուցչութեան կոչուած է ինստիտուտական կողմէ:

ՖԼԻՐԹԵԼՈՒ ԱԿՈՒՍԲ

(FLIRTING-CLUB)

Այն սալօնը ուր մտանք Սըր ձէյմս Իննիսի միջոցով, իր գերընտիր կահաւորումով արժանի երեւցաւ մեզ սիրական օթեւանը ըլլալու մեր փափկանկատ բարեկամին պէս նրբացած անձնաւորութեան մը։ Անուշ գոյներով ներկուած ձեղունին վրայ, տարաշխարհիկ թռչուններ իրենց երփներանգ թեւերը կը պարզեն։ Բազմոցներուն վրայ ճաքոնական մետաքսեղէններ էին քաշուած։ Նուրբ կարմիր, անուշ կանանչ, գրեթէ կապոյտ երանգներով ապակեգունտեր դիւթական լոյս մը կը արձակէին, բայց անանկ նուազուն ու հեշտագին քաղցրութիւնով մը որ աչքը կ'առնէր,—արուեստական սխրալի լոյս մը՝ աւելի քան ոչինչ յարմար այդ Բլլային ընծայած անբաղդատելի տեսարանին, որ Բըքէտելլիի մօտերը ըլլալով հանդերձ այնչափ աւելի մեկուսացած երեւոյթ մը ունէր որչափ պիտի ունենար եթէ Լէնտ'ս Էնտի ծայրագոյն սահմանին վրայ գտնուած ըլլար։ Հոս ու հոն կը նշմարուէին երեկոյթի ֆրաքով, լամբակնուռ վրայ փնջիկներով, տասնըհինգի չափ էրիկ մարդիկ, որոնք խօսելու վրայ էին. նմանապէս երեկոյթի ղգեստներով կիներու հետ, ամէնքն ալ իրարմէ աղուոր, փողոցը անցորդներուն գլուխը ետ դարձնելու աստիճան և գեղեցկութիւնով մը որ հակադրութեան շնորհիւ ա'լ աւելի ցայտուն հանգամանք մը կ'առնէր։ Սիրոյ վարպետ փորձագէտներու ձեռքով ընտրուած աղուոր կիներու ամբողջ հաւաքածոյ մը, ոսկեթել մետաքսեղեններու ծանրագին պաճուճանքին մէջը կը չըմանակուէր։ Ակռաները ցուցադրող կնկան մը ջուրի պէս վճիտ աչքերուն մէջ անդլիական անմեղունակութիւնը կը խայտար։ Յուզիթի կիսադէմքով հրեայ գեղունի մը իր թաւազեղ չրթունքին ծայրովը սիկաբէթ մը կը մխալնէր և երկու վայրկեանը մէյ մը իր խիստ սև աչքերուն վերեւի խիստ թաւ յօնքերը կը պուստէր։ Եւ ուրիշներ,

խարտեայ կամ թուխ, իրենց մերկ բազուկներով կը կրթնէին բարձերուն վրայ, կը խնդային կամ էրիկ մարդերուն հետ կը խօսակցէին, մինչդեռ մերձակայ սրահէ մը, պատառաքողի թեթեւ աղմուկին խառնուած թրթիչներ կը յայտնէին թէ ուրիշներ ալ ընթրելու վրայ էին։ Երիտասարդ պարոն մը, դաշնակին առջին անցած, քիչ մը բիրտ բայց աւելնոտ եղանակով մը, Պօթթօի Մեթիսթօ Թեյլին մէկ կտորը կը զարնէր։ Զգլխի անուշահոտութիւններու տամուկ շունչը կը ծածանէր այդ խորհրդաւոր սենեակին օդին մէջ, որ պզտուտիկ տնակի ու խիստ բարձր ընկերութեան եղական տղաւորութիւնը կուտար մեզի։ Ինչու որ, յայտնապէս խորանկատ հեշտասէրներու մաղէն անցած, գերընտիր այդ կիներուն աղուորութիւնը եթէ հաւնոցի մը պատկերը կ'ընծայէր, միւս կողմէ էրիկ մարդերուն վայելուչ կենցաղագիտութիւնը, նոյնիսկ կիներուն վերապահ դիրքուկացը, ինչպէս նաև անբաղդատելի հանգստաւէտութեան մը անթերիութիւնը, շուայտութեան ու անվայել ընկերութեան մը բոլոր հեռապատկերները կը տարամերժէին ի սպառ։ Փլիրթին—Բլլայն էր ան՝ որուն վրայ առջի օրը մեզ խօսած էր Սըր ձէյմս։

—«Իմ բարեկամուհիս դեռ չէ եկեր»։ ըսաւ, ամէն կողմ պտտելէն ետքը՝ ֆրաքին մէջ նրբին ու ճապուկ, մէջքը գոգացած, զիստերուն վերեւը նորէն լայնցած, անանկ որ սեւաթեւ միջատի մը երեւոյթը առած էր։ —«Նստեցէք, .. Ակումբը դրեթէ ամբողջ է սո իրիկուն» — Յետոյ յարեց. «Ընդամէնը տասնըութը հոգի և երկուք ալ հրաւիրեալ, որոնցմէ բացարձակ գաղտնապահութիւն կը խնդրուի, ինչպէս որ ես ալ խօսք առի ձեռք։ Այսպէս, ամէն անդամ, կարգով, կրնայ շարաթը մէկ անգամ երկու բարեկամ բերել իրեն հետ. էրիկ մարդերուն համար՝ այսչափ։ Գալով կիներուն, անոնց թիւը անսահման է. բայց ընդունելութեան պայմանները այնչափ խիստ են որ, արդարև անուր բաղդաւորութիւն մըն է, այս տասնեակ մը կիներն ալ հոս կարենալ ժողվել...»

— «Այո՛, այնչա՛փ խիստ են» . շարունակեց, տեսնալով մեր դէմքին վրայ ժպիտի մը ուրուագորութիւնը : «Ձէք խորհիր անշուշտ որ», ըսաւ բրիտանական յարգապատուութեան ընադդական շարժումով մը «վարնոց տեղ մը տարած ըլլամ ձեզ : Այս մանրանկար ակումբը, բացարձակապէս հաւատարիմ մնացած է իր մկրտութեան անունին . Ֆլիրթին — Բլըպ մըն է ան և միշտ ու միմիայն ֆլիրթելու ակումբ մը եղած է . . . Ամէն մէկ էրիկ մարդ պարտաւոր է իբր առաջին պայման ընդունիլ որ, այս սալօնին մէջ ընդունուած կիներէն ոչ մէկուն սիրողը պիտի չըլլայ ըսաւ . ինչպէս նաև, ամէն մէկ կին ալ խօսք տուած է որ ակումբին մասնակցող որ եւ է մէկ էրիկ մարդուն հոմանունին պիտի չըլլայ երբեք : Դուռնէն դուրս ելլալնուս պէս, աստեղի անձերէն ոչ մէկը պէտք է ձանձնայ միւսները : Ոչ մէկ անուն պէտք է բերան առնուի : Ասոնցմէ զատ, կիները գեղեցկութեան քննութիւն մը կ'անցընեն, և կ'ապահովցնեն ձեզ որ քննութեան ատեն չափէն աւելի խիստ ենք . . .

«Եւ եթէ ուզէք գիտնալ արտառոց այս կարգադրութեան բուն պատճառը, պիտի թերեւս դարմացնմ ձեզ ըսելով որ, չափէն աւելի լուրջ է անիկա և մինչև մէկ աստիճան իմաստասիրական : Ասկէց երկու տարի առաջ էր : Եօթը — ութը վաղեմի բարեկամներ ժողովուած էինք ուրիշ և շատ աւելի ծանրաբարոյ ակումբի մը ծխասենեակին մէջ և խօսակցութիւնը կը դառնար մեր շատ սիրելի ընկերներէն մէկուն դեռ նոր ըրած անձնասպանութեանը վրայ : Ամէնքս ալ միաձայնօրէն հաստատեցինք որ մենք ալ անոր չափ ձանձրացած էինք կեանքէն և անոր պէս աշխարհէն հրաժեշտ առնելու ճամբուն մէջ : Եւ սակայն ոչ մէկերնիս կործանած, անպատուած էինք կամ հիւանդ : Ամէնքս ալ ունէինք այն միեւնոյն հարստութիւնը, շրջանաւորները, սէրերը զորս ունէինք առաջ : Բայց բան մը կար որ մեռած էր մեր ներսը, ու թէպէտև խօսակցութիւնը, վայելչութեան պահանջին համեմատ, սիրալիր կատակարանութեան մը

ձեւին տակ կ'ոլորաւորէր, դուրսէն դիտող մը սակայն շուտով պիտի դուշակէր որ զուարթ ըլլալէ շատ հեռու էինք, երբ Օքսֆորտի նախկին պսակաւոր մը, — տարփոտ փիլիսոփայ, — մեր ձանձրախտին պատճառը բացատրեց մեզ, բազմաթիւ հատուածներ մէջ բերելով հին իմաստուններէն՝ որոնք հեշտութեան ճշմարիտ գիտութիւն մը ամբարած էին : — «Դուք տենջանքը սպաննած էք ձեր մէջը, ըսաւ մեզի . և երջանկութիւնը տենջանքին մէջն է միայն . . . » — Զանց կընեմ ընդլայնել նիւթը և ուղղակի եղբակացութեան կը դիմեմ : Մեր Եպիկուրեանը, երբ տեսաւ որ ամէնքս ալ հրապուրուած ենք իր ընտանիքի ակներև ճշդութենէն, մանրամասնօրէն պարզեց մեզի, իր երկար ատենէ ի վեր երազած մէկ ծրագիրը որուն համեմատ պիտի կազմակերպուէր ժամադրութեան դադանի վայր մը ուր բացարձակ օրէնք պիտի դրուէր ինչպէս սրահին թանգարաններուն մէջ կ'ըլլայ, դիտել՝ բայց ձեռք չի դպցնել : Տեսալ մը այդ գեղապաշտութեան միջամուխ ըլլալով ոչ նուազ արուեստի մը տիրացած պիտի ըլլայինք . հեշտութիւնը կախակայել : Միտքի ու ջիղերու գերազոյն այս փափկայուղութիւնը ճաշակելու համար, ըստ իրեն, ակումբին անդամները պէտք էին տարիքով երեսունէն վեր ու յիսունէն վար ըլլալ : Երեսունէն առաջ մարդ չափէն աւելի կը տենչայ, կ'ըսէր, և յիսունէն վերջը մարդ չափէն աւելի կը զղջայ : Որով, ծրագիրը կը կայանար կարգ մը կենցաղասէրներ ժողովելու մէջ, որոնք քիչ մը հասնումէն համ առնելու չափ նրբացած ըլլային, ինչպէս նաև մտացի ըլլային, հեղուկի մը բոյրը հեղուկէն գերադաս համարելու չափ, մէկ խօսքով, անկադարու (decadence) ճշմարիտ հռովմայեցիներ, — ահա թէ ինչպէս Ֆլիրթին — Բլըպը հիմնուեցաւ . . .

«Խնդիրին ամէնէն հետաքրքրաշարժ կողմ մը այն է որ» շարունակեց Սըր Ճէյմս, — մեզի դարմանք պատճառեղէն չարածճի հաճոյք մը զգալով, — «անդադնասպանութեան մը բերումով իմացուեցաւ մեր գրաւը, որուն ոչ մէկերնիս դրժեւելու տրամադրութիւն ունէ-

ինք և բաղմաթիւ կիներ մեր ակումբին մէջ մտնալու խօս ըղձանքէն խայթուեցան։ Ամէն դասակարգի պատկանող կիներու գրեթէ բոլոր զարդասենեակներէն նամակներ ընդունեցանք։ Էն առաջ փութային հոմանուհիները, ետքէն դերասանուհիները, յետոյ որբեւարի կամ ամուսնալոյծ կիներու անստոյգ լէզէօնը, ու մենք գեղեցկութեան քննութենէ կ'անցնէինք զանոնք անողոք անկողմնակալութեան խստութիւններով, այնչափ աւելի որչափ աղուորութեան այդ քննութեան մաս կը կաղմէր նաև հագուածքի ու շքեղանքի քննութիւն մը։ Չենք ընդունիր որ կին մը կարենայ ճշմարտապէս գեղեցիկ ըլլալ, երբ իր բնական հմայքին վրայ չաւելցնէր արուեստականին բոլոր դիւթանքն ալ, կերպաներուն բովադակ յղփանքը, և այս վերջերս յաղթանակնիս կատարեալ եղաւ։ Բարձր դասու ճշմարիտ տիկին մը ներկայացաւ մեզ և շատ չընէր դեռ որ Ակումբի անդամ ընդունուեցաւ։

«Վերոյիշեալ տիկինը սակայն, մինչև այսօր ամուսնական սիրոյ գերբնտիր տիպար մը ներկայացուած է նոյն իսկ Պէլկրաւ Մքուէյրի ամէնէն մաքրակրօն ու բարոյամուտ անձնաւորութիւններուն կողմէ։ Ամուսնացած է աղնուական պառնոնիկի մը հետ որ վեց տարիէ ի վեր երկայնաթուփն գամուած է անդամաւորութեան մը հետեւանքով, զրթութեան քոյրի մը խղճմտութիւնով կը խնամէ այդ ողջ—մեռելը, կերակուրը կերցնելով անոր, իր ճերմակ աղուորիկ ձեռքերովը հագուեցնելով զայն, և ահա յանկարծ առտու մը թեկնածու կը ներկայանայ մեզի, առարկելով թէ մեր կանոնագիրը հաճելի թուած է իրեն, թէ չի գիտեր ինչպէս անցնել իր գիշերային պարապի ժամերը, և թէ վերջապէս քանի որ դեռատի կին մը ինչ որ ալ ընէ չի կրնար խուսափիլ էրիկ մարդերուն «գարպաս» կոչած բանէն, լաւ էր որ այդ գարպասը զուտ ժամանցի համար ըլլար և յաւէտ աննպատակ... Բայց կեցէք, ահաւասիկ ներս կը մտնայ կոր...»։

Եւ արդարև, այդ պահուն անասնք,

ճարտական կերպաներով զարդարուած սրահին մէջ մտնալը, մօտաւորապէս երեսուն տարու կնկան մը, որուն հիանալիօրէն կաղապարուած շրջադէստին մէջէն կը գուշակուէր, դեռատի աղջկան իրան մը որ դեռ նոր կըսկսէր հասունութեան փարթամ կորութիւններով պզտիկ խոյանքներ զիկզակել։ Ճերմակ հագուած էր, ինք շատ խարտեալ էր, կապոյտ աչքերով որոնք կը տփգունէին երփներանգ լոյսերուն տակ։ Չիփակը՝ որուն ետին շատ աւելի տէքօլթէ էր քան առաջը, ուսերուն դրգոյի միջապիծը կը ցուցադրէր, միւսնոյն ատեն հաղիւ թեթեւօրէն միայն ուրուագծելով լանջքին նորածագ սահմանը... «Ճէյմս» ըսաւ երբ ներկայացումները լնցան և ընթերլու համար նստելու վրայ էինք։ «առաջուրնէ կիմաքնեմ քեզի որ, սարսափելի անօթի եմ և յետոյ վերջին աստիճան զուարթ եմ այս գիշեր...»։

—«Ըսել է Սըր Արչիպօլտ աւելի աղէկ է այսօր» հարցուց մեր բարեկամը...։

—«Ճշգիւ», պատասխանեց ան.—«Երբոր այս վերջին օրերուն պէս ցաւ կը քաշէ, ֆիլթրելու բնաւ սիրտ չեմ ունենար...»։

Այդ խօսքերը ըսած ատեն, անդիական պղտորտիկ, կաթնաթոյր ոտքներ կուլ տալու վրայ էինք մենք։ Ճաշասրահը զարդարուած էր նրբօրէն հինցած գոյներով կապերտներով։ Իր ակռաներուն ծայրովը որոնք իր կիսաբաց բերանին մէջէն կը շողշողային, այդ խօսքերը թռցնելէն ետքը, ծաղկաթի կինը վեր վերցուց իր դաւաթը ուր անարատ շամբանեան կը խարտիչանար և դանդաղօրէն, պզտիկ ումպերով կուլ տուաւ։—Իսկ մենք բնաւ չի կըցանք գիտնալ թէ Սըր Ճէյմս մեր քիթին խնդաց, և թէ այդ գիշերը որովհետ ընթերցէինք. բարձր դասու տարօրինակ պէս անբարոյացած Տիկինի մը հետ, թէ տարօրինակապէս նրբացած ու աղնուականի կերպերով հորիզոնականի մը հետ։

ԲՕԼ ՊՈՒՐԺԷ

Թարգմ. Չիթիէ-ՍԱՐԱՅ.

ՆՈՐԵՐՈՒ ԲՍԺԻՆԸ

ՇՈՓԵՆԱԲԻՆ ՍՈՅԼԸ

Հեռո՛ւն, հեռո՛ւն ծովուն վրայ,
Ծուխե ամպ մը ձրգած եսին
Շոգեմաւը երբ կը սուրայ,
Ի՞նչ ազուռ ե սոյն իր յետին:

Ձըմեռուան ցուրտ հովին մեջէն
Իր սուլումներն երկար հեւեոտ
Կարծես խորունկ հառաչներ են՝
Միտ զսպուած, անձկակարօտ:

Իսկ երբ ցըղաւտ մեզն ամառուան
Վարագուրե ծովը հեռո՛ւն՝
Կարծես սոյլը տեղոտ, երկայն
Պաղատանք մ'ի սիրոյ մ'անհուն:

ԷՏԼՎԱՅՍ

Բերա

ՎԵՐՋԻՆ ՅՈՒՆԵՐ

Իրիկուններ մեղամաղձոտ ոգեվար,
Մոյլ ձանձրոյք մը քարտափոխ կը քալին
Ստուերներէն կ'անգայտանայ դալկանար,
Անհուն սարսուռ մը քախձագին, տրտմանք:

Հորիզոնին մօտ — արեւակի ցըլար —,
Ուր կարմրութիւն մը հրաւեկ կը փայլի
Տժգոյն արեւ մը կը հալի բոցավառ,
Լոյսի անձեւ մը սրսկելով ծիրանի:

Ու ծուկներ լուրջ ամպերու կապուտակ,
Անուշախով կը վե-վե-ին մարմրուն,
Հորիզոնին ցըղաւտներուն մէջ կարմրակ:

Կը փայլալուն ստուերային փումայրով,
Լոյսի վերեւ, ցոլացումներ քրքրուն,
Սքու համբուրող նայուածքին պէս հոգեթով:

ԳՐ. ԵՂՆՍԷԱՆ

Սամսոն

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Հրդեհի ինքնաշարժ ազդարար մը. — Իսկապէս
մատնաւ մը. — Անքի հեռագրով հաղոր-
դակցութիւն՝ փայտ կառախումբի մը հետ.
— Ինքնաշարժ կառք՝ հանգրու մեջ:

Հրդեհի ինքնաշարժ ազդարար մը. —
Վերջերս հետաքրքրական գործիք մը պատ-
րաստուած է Rousselle et Tournaire և
Լ'նկ.եան տան կողմէ, որ հրդեհի ծագումը
ինքնիրեն իմաց կուտայ անեցիներուն: Այս
գործիքը նախապէս շինուածներուն վրայ
կարգ մը առաւելութիւններ կը հերկայացնէ
և անոնցմէ աւելի կատարելագործուած է:
Գործիքը շատ պարզ է սակայն: Ահաւասիկ
անոր նկարագրութիւնը՝ իր ընդհանուր գի-
ծերուն մէջ ու անոր գործելու եղանակը:

Հրդեհի ինքնաշարժ այս ազդարարը (a-
vertisseur automatique d'incendie) բաղ-
կացած է գլանաձև փայտէ մը, որ քանի մը
սանթիմէթր թանձրութիւն և 20—30 սան-
թիմէթր տրամագիծ ունի: Այս գլանաձև
փայտին թանձրութեանը մէջէն խողովակաձև
ծակ մը բացուած է 1ուկէս սանթիմէթր
տրամագիծով ու այս ծակին մէջ տեղաւոր-
ուած է ապակիէ բարակ բուռը ջերմաչափի
մէջ (*) որ իր մէկ ծայրին վրայ փամփուտաձև
մաս մը ունի սովորական ջերմաչափներու
նման: Փամփուտը, որ կա'մ անդիկով և
կա'մ գունաւոր ալքոհլով լեցուած է, բո-
լորովին դուրսը կը մնայ գլանաձև փայտին
կողին վրայ: Փայտին մէկ մակերեսին վրայ
երկու մետաղեայ զսպանակներ հաստատուած
են պտուտակներով և իրարմէ մեկուսացած:
Այս զսպանակներէն մէկը ջերմաչափին փամ-
փուտին (ուռեցած, գնտաձև մաս) վրայ
նստած է և անոր միջոցաւ բարձր բռնուած:

(*) Այս ջերմաչափին ապակին անա'նկ մը
շինուած է որ անդիկը և կա'մ ալքոհլը 40
աստիճան ջերմութենէն վեր բարձրացածին
պէս, անպատճառ կը կոտրի, ստրածականու-
թեան օրէնքին իրը հետեւանք:

անա՛նկ որ եթէ փամփուշտը վերցուի, զըս-
պանակը վար իյնալով կը շօշափէ միւս զըս-
պանակը և անոր հետ հաղորդակցութեան
մէջ կը մտնէ: Զսպանակներուն միւս ծայրերը
կը հաղորդակցին ելեկտրական բարդի մը
երկու բեւեռներուն հետ որ զանգակ մը հըն-
չեցնելու պատրաստ է: Եթէ զսպանակները
իրարմէ բաժնուած ըլլան, ելեկտրական հո-
սանքը չի գործեր և զանգակը չի բանիր.
ըսել է թէ ազդարար գործիքը երբ դադարի
մէջ է, ընդհատիչի դերը կը կատարէ բարդէն
եւած հոսանքին և ելեկտրական զանգակին
միջև: Արդ, այս կազմածը, տուներու, խա-
նութիւններու, յարկաբաժիններու մէջ ուղուած
տեղերը, պատշաճ դատուած մասերու մէջ
կը զետեղեն: Երբ հրդեհ պատահի, յառաջ
եկած ջերմութենէն, ջերմաչափին սնդիկը
կամ ալքոհլը 40 աստիճանէն վեր ելածին
պէս, ապակեայ փամփուշտը չկրնալով դի-
մանալ՝ անմիջապէս կը կոտորի ու կը թողու
որ վար իյնայ իր վրայ հեծած զսպանակը և
միւս զսպանակին հետ շօշափման մէջ ըլլայ:
Այդ միջոցին ա՛հա, ազդարար գործիքը կը
թողու իր ընդհատիչի դերը և հոսանքը
հաստատուելով կ'անցնի ելեկտրական զան-
գակին մէջ և զայն ազմկալից շունդիւնով
մը կըսկսի հնչեցնել: Այս ազմուկին հետե-
ւանքը հարկաւ կրնայ դուշակուել թէ ի՞նչ
կ'ըլլայ...

Իսկապէս մարտնչաւ մը.— Տանըմարքայի
մէջ վերջերս շինուեցաւ մարտանաւ մը, որ
կրնայ թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի վրայ եր-
թեւեկել յաջողապէս: Իրաւ է որ շատերու
անհաւատալի պիտի թուի այս պարադան,
սակայն փութանք ըսելու թէ իրականութիւն
մըն է այն և փորձուած ալ: Այս հետաքրք-
րական մարտանաւը, որուն անունն է Le
Cygne, Լինկպիէն մինչև Յօրոմ կ'երթայ և
կուգայ: Լինկպի, չորս լիճերու մօտ կառուց-
ուած աւան մըն է. լիճերուն առաջինն ու
երրորդը միայն իրարու հետ կը հաղորդակցին
նեղ ջրանցքներով. իսկ միւս երկուքը շուրջ
300 մէթր լայնութեամբ հողադանգուածով
մը կը բաժնուին իրարմէ ու մարտանաւին
փորձը հոս է որ կատարուած է. սա այդ

հողի զանգուածին վրայէն իրր շոգեկառք
քալելէ յետոյ, լիճերուն մէջ կը մտնէ, հո՛ն
ալ իրր շոգենաւ ճամբորդելու համար և
փոխադարձաբար:

Զուրէն ցամաք ելած մասին վրայ, ի-
րարմէ բաւական հեռու, ցիցեր զարնուած
են ջուրին մէջ, որոնք հետզհետէ իրարու
կը մօտենան ցամաքին մօտերը, մինչև որ
նաւուն լայնքը առնեն: Նաւը այս ցիցերէն
բռնուելով կամ անոնց կառչելով իր ողնա-
փայտը կը յաջողի դնել ցամաքին վրայ, ուր
սովորական երկաթուղիի գիծեր հաստատ-
ուած են: Մարտանաւը, իր ծփացման կէտէն
վար ունի երկու զոյգ կառանիւններ, զորս
կը դնէ երկաթեայ գիծերուն վրայ: Գալով
այս հետաքրքրական նաւուն մեքենականու-
թեան, Le Cygneի չարժիչ մեքենան երկու
հատ է, որոնք իրարմէ բոլորովին անկախօրէն
կը շարժին ու կը գործեն. անոնցմէ մէկը շո-
գեկառքի մեքենային կը նմանի և չարժման
մէջ կը դնէ վերոյիշեալ երկու զոյգ կառա-
նիւնները ու անոնց միջոցաւ սքանչելի կեր-
պով կը յառաջանայ երկաթ գիծերուն վրայ,
իւր թէ շոգեկառք մը եղած ըլլար ան: Երբ
ցամաքէն ջուրին մէջ իջնելու կարգը գայ,
երկաթեայ գիծերը կ'առաջնորդեն նաւը ջու-
րին մէջ, ճիշդ այնպէս ինչպէս որ նաւ մը
նաւարանէն կ'իջուցուի ծով փայտեայ լաս-
տերու (գըղաշ) միջոցաւ: Անդամ մը որ
ջուրին մէջ կը մտնէ նաւը, հոն, միւս մե-
քենան կըսկսի բանիլ՝ առաջինը գործելէ
դադրած ըլլալով արդէն. կը դարձնէ նա-
ւուն ետեւի ստուտակը (hélice, փէրվանէ) ու
նաւն է կը յառաջանայ ուղուած արա-
գութեամբ: Զուրին մէջ ընկղմած չորս ա-
նիւններ իր գնացքին միաս չեն հասցներ ու
բնաւ անպատեհութիւն չունին: Ընդհակա-
ռակը, թոյլ կուտան որ մարտանաւը ծովէն
դուրս, ցա՛աքի վրայ գեղեցիկ շոգեկառքի
մը և կամ եթէ կ'ուզէք, սիրուն թրամուէյի
մը ձեւը առնէ: Անշուշտ առաջին փորձն է
այս, որ կը ցուցնէ թէ կարելիութիւն կայ
շոգեկառքի և շոգենաւու կրկին հանդա-
մանքները միացնելու նաւու մը վրայ: Գի-
տութեան այս յառաջխաղացման մէջ, տա-

բակոյս չկայ որ օր մը այս հրաշալի գիւտն ալ պիտի ունենայ իր կատարելագործութիւնները պատեբազմներու միջոցին գործելու համար:

Անքել հեռագրով հաղորդակցութիւն՝ քալող կառախումբի մը հետ. — Անթել հեռագիրը, որուն վրայ երկարօրէն գրուեցաւ այս էջերուն մէջ, օրէ օր մեծ համեմատութիւններ կ'աւելնէ՝ իրմով կատարուած կարգ մը գիւտերու շնորհիւ: Օրէ օր նոր կատարելագործութիւններու լուրեր կը հասնին, և մարդիկ կը ճգնին անթել հեռագիրը մեր անմիջական պէտքերուն կարելի եղածին չափ պատշաճեցնել:

Անթել հեռագրի գիւտէն վերջը, գիտուններու միտքը կը յողմէր արդէն հնարելու համար անա՛նկ միջոց մը, որով կարելի ըլլար անթել հեռագիրը գործածելի ընել՝ քալող կառախումբի մը հետ հաղորդակցելու խնդրոյն մէջ: Անհարթելի դժուարութիւններ սակայն արդելք եղած էին՝ բաղձացուած արդիւնքին հասնելու համար: Երկու գիտուններ, Պ. Պ. Կուարինի և Սէզարի, կրցած են պարզ լուծում մը տալ և բառնալ ամէն դժուարութիւն: Իրենց գտած գրութիւնը կը կայանայ պարզապէս անոր մէջ որ իբր միջանկեալ կայլ՝ (antenne intermédiaire) կը գործածեն սովորական հեռագրաթել մը: Ըսածնիս բացատրենք, Ենթագրենք թէ Սիրքէճիի կայարանն ենք. անկէ մինչև Ենթի-գուլէ հեռագրաթել մը երկնցած է օդին մէջէն: Քալող կամ կեցող կառախումբին մէջ կը գտնուին հաւասարապէս Հէրցեան ճօճողը (oscillateur de Hertz) և Պրանլիի ընկալուչը (*), (radioconducteur): Արդ, կա-

ռախումբը Սիրքէճիէն ճամբայ ելլելուն պէս, ենթադրենք թէ պէտք ունեցաւ, ճամբուն վրայ, Գում-գարուի կայարանին և կամ Սամաթիաէն Գում-գարու եկող կառախումբին լուր մը հաղորդելու: Հէրցեան ճօճողէն (որ լրատու կառախումբին մէջ կը գտնուի), արտադրուած ելեկտրական ալիքները կը յափշտակուին անմիջապէս՝ օդին մէջէն երկրնցած հեռագրաթելէն: Ապացուցուած է որ այս օդային թելը յատկութիւնը ունի ելեկտրական ալիքները ընդունելու ու յետոյ ցրուելու զանոնք օդին մէջ, անթել հեռագրի antenneներուն պէս: Ալիքները կ'երթան կ'ընդունուին Պրանլիի ընկալուչէն, որ կը գտնուի նոյնպէս կամ Գում-գարուի կայարանին և կամ Սամաթիաէն զալու վրայ եղող կառախումբին մէջ: հետեւաբար ղըրկուելիք լուրն ալ կը հաղորդուի առանց ու է խանդարման: Կը տեսնուի ուրեմն որ օդային սա մեր տեսած հեռագրաթելը կարեւոր պաշտօն մը կը կատարէ այս պէս, ալիքները ընդունելէ վերջ զանոնք նորէն ցրուելով: Ահա՛ այս թելն է զոր միջանկեալ կայլ (antenne intermédiaire) կոչեցին վերոյիշեալ երկու գիտունները և որուն միջոցաւ յաջողեցան այս կէտն ալ լուծելու: Փորձերը ցոյց տուին որ 17 քիլոմէթր հեռաւորութեան մը մէջ, հեռագրալուրերը կատարեալ ճշդութեամբ կը փոխանակուին՝ առանց ու է խանգարման և սխալի: Փորձարկուները իբր միջանկեալ կայլ ուղեցին գործածել նաև կառախումբին երկաթեայ դիմերն ալ, սակայն շատ սկիւր գտան անոնց գործունէութիւնը: Օդային հեռագրաթելը աւելի նպաստաւոր

Միայն թէ այս նոր գործիքին կիրառութեան միջոցին ընկալուչ կայարանի մեքենական կազմածին մէջ, քիմական նիւթեր ալ պիտի մտնեն ու ասկէ զատ, փոխանակ Մոուսի այբուբէնը գործածելու, հեռաձայնի մասնաւոր դրութիւն մը պիտի գործածուի՝ մեծ դիւրութիւններ տալով հաղորդակցութեան: Կը հաւաստուի թէ Մարգոնի ընկերութիւնը Պ. Տը Ֆօրէսդի դէմ դատ բացած է, իր իրաւունքներուն մէջ ոտնձգութիւն ընելուն համար:

(*) Պ. Տը Ֆօրէսդ անուն Ամերիկացի երիտասարդ ելեկտրագէտ մը, երկու ամիս առաջ Ամերիկեան պատերազմական պաշտօնատան ներկայացուցած է Անթել հեռագրի նոր դրութիւն մը, որուն ամէնէն հիմնական մասն է antiohereur ըսուած գործիքը, որ Պրանլիի ընկալուչին՝ Հէրցեան ալիքներէ ընդունած սոյաւորութիւնը աւելցնելու եւ զօրացնելու առաւելութիւնը կ'ընծայէ:

երեւցաւ իրենց զիւտին յաջողութիւնը ապահովելու համար և կը կարծեն իրենք թէ այլեւս լուծուած կրնայ համարուիլ քալող կամ կեցող կառախումբերու միջև անթել հեռագրով հաղորդակցելու դժուար խնդիրը :

Ինքնաբերական կառք հանգեցու մեջ. — Այլ ճէրի մէջ Սաքի և Սիտի Եռսէֆի հանքերու շահագործման Տնօրէնութիւնը, վերջերս փորձ մը ըրաւ ինքնաշարժ կառքերը օգտակարացէս գործածելու՝ հանածոները անոնց միջոցաւ փոխադրել տալով : Այս մտք մասնաւորապէս պատրաստուած ինքնաշարժ սայլակներ գործածեց և փորձերը դժնացուցիչ արդիւնքներ տուին : Սայլակին շարժիչ դօրութիւնը ա'յնչափ մեծ էր որ, կառքը կարող եղաւ անհարթ ճամբաներէն անցնիլ ու դարուվեր ուղիներէն վեր ելլել կատարեալ դիւրութեամբ : Վեց հազար քիլօ բեռով մը կրցաւ շատ զիւրին մագլցիլ բաւական շեղ զառիվերէ մը : Ու տեսնուեցաւ որ եթէ քարշող կառքին դանաղան մասերուն վրայ կարեւոր փոփոխութիւններ ըլլան, ինքնաշարժ կառքը կատարելապէս պիտի կրնայ պատշաճիլ հանքային կարծր աշխատութեանց, միսթարելով խեղճ բանւորները : Փորձերը կը շարունակուին :

ՆՈՒՊԱՆՔ

ԳԱԻԱՌԻ ԿԵԱՆՔԷ(*)

ԿԱՐԷՆ

Տեսայ զինքը խնձորի պէս կարմրած, աչքերը բոցեղ, սիրտը թաքախուռն : Նախաճաշ էր որ կը բերէր, զգացնել չուզելով իր կանուխ քովս գտնուիլը : Աման մը կաթն էր զոր կը խմէի առտունները :

— Դեղամս, կ'աղաչեմ, ներողամիտ գլուխուէ յանդգնութեանս :

— Ի՞նչ յանդգնութիւն, խեղճ ես, Կարէն, չե՞ս գիտեր որ կը սիրեմ քեզի :

(*) Շար. նախորդ թիւէն :

— Իրաւ կը սիրե՞ս, յարեց Կարէն :

— Անշուշտ, ու բոլոր սրտովս,

— Դիչերը, սիրուն Դեղամս, երբ երազներով օրորուած կը քնանայի մուշիկ մուշիկ, եկար արդէն իսկ արցունքոտ աչքերս սրբեցիր ու սլահ մը տատամսումով յանկարծ համբոյր մը դրոշմեցիր այտերուս վրայ : Այդ յուզումով էր որ արթնցայ ու մէյ մըն ալ չկրցայ քնանալ : Մինչև առտու քու վրադ մտածեցի : Փափաքեցայ սիրել քեզի, արդէն իսկ սիրտս այրիլ սկսած էր, բայց մտքիս մէջ, վիճակի ու միջավայրի տարբերութիւնը մեծ արգելքներ հանած էր առջևս : Անհանգստութիւնս շատցած էր : Պարապ տեղը աչքերս երկնքին յառած կ'ուզէի մտքես ցրել այդ դաղափառները : Անկարելի եղաւ : Սիրտս այնքան ուժգին կը բաբախէր որ, անկողնիս մէջ՝ գիշերային աղջամուղջով միայն քողարկուած մարմինս՝ կայրէր կրակներու մէջ : Պահ մը ելայ նստայ ու դարձեալ չկասեցաւ : Ուզեցի քովդ գալ՝ բայց վախցայ որ թերեւս անպատեհութեան մը մէջ զրանուիմ ու մերժուիմ, որուն վախճանը դառն պիտի ըլլար անշուշտ : Չեմ գիտեր թէ ինչո՞ւ բաժնուիլ չեմ ուզեր քեզմէ : Ընթերցանութեան մէջ բաւական կը յաջողիմ, եթէ քիչ մը աւելի հասկնամ, ատով միայն պիտի կրնամ մեղմացնել անհանգստութիւնս : Ինծի հետ ունեցած առանձնութիւններդ ու անուշ խօսուըւտութիւններդ թովեցին զիս : Անհուն սէր մը կըլդգամ քեզի հանդէպ, Դուն ալ կը սիրե՞ս զիս, յարեց ու սկսաւ արտասուել :

Սիրտ տուի իրեն և ըսի առանց վաբանման :

— Կը տարակուսի՞ս, աղուն՝ո՞րս, քեզի պէս պարիկի մը հոգիս զոհեմ, շա՞տ է :

— Չէ՛, չէ, Դեղամ, կ'աղաչեմ, սահման մը դիր սիրոյդ, չեմ ուզեր որ ճակատագիրդ կապեմ ինծի նման գեղջկուհիի մը հետ : Այս միջնորդութէն դատուրիչ տեղ զիս չի կրնար երջանկացնել :

— Ի՞նչ կ'ըսես, Կարէնս, ինծի համար կարեւորութիւն չունի դեղ քաղաք, կը բաւէ որ կեանքի ընկերուհիս իմ սիրածս ու պաշտածս ըլլայ :

— Ուրեմն զիս կը սիրե՞ս :

— Անտարակոյս :

— Անկարելի՛, ըսաւ ու լռեց երեսը դարձնելով :

Առտուան արեւը իր փայլուն ճառագայթներով կ'ողողէր սենեակս : Ոչ ոք կար, կարէնը ու ես : Պահ մը սիրտի անհատնում խռովքէ պարտաստած՝ ինկաւ բարձին վրայ, ու հրապոյրով լեցուն մարմինը թաշանման տարածեց անկողնին երկայնքը : Աչքերը դէպի առաստաղը յառած՝ անքթիթ կը նայէր : Ես կը պտտէի սենեակին մէջ, անկապ խօսքեր երբեմն կը խզէին լռութիւնը : Մօտեցայ, չոյեցի ձեռքերը, երեսը ու մազերը, սկսաւ ժպտիլ : Ծնորհալիօրէն հանգրիճուած էնթարին քղանցքը ցոյց կուտար սրունքներուն զգլխից կըտրութիւնը : Կանացի հրապոյրի կողմանէն էր հարուստ կուրծքերը որ հագուստին տակէն դուրս կը ցցուէին : Ծռտ մը մոռցայ հաշիւ, ձի, քաղաք, վարպետ : Միտքս կեղրոնացած էր Կարէնին վրայ, վարդազոյն այտերը կը վառէին փառփառ, աչքերը սև ու խռոր՝ երկար արտեւանոնքներուն տակ կը բացուէին կը գոցուէին, յօրինելով արծաթեայ կայլախներ՝ որոնք արեւուն ճառագայթներուն տակ զմրուխտի նման պսպղուն՝ ա՛լ ա՛նելի կը շեշտէին անոր հրապուրիչ դիւթանքը :

Պահ մը վայելեցի, զմայլանքի անուրջներով օրօրուած այս հմայիչ տեսարանը : Սիրեցի զինքը, սիրտս կը թուլուար անոյշիկ նայուածքներէն՝ զորս յառած էր վրաս, թրթռացնելով հոգւոյս թելերը :

Դ.

Կարէնին ծայրաստիճան համարձակութիւնը ու իմ տարօրինակ երկնոտութիւնս ուղիղ չէին համեմատիր իրարու հետ : Զգացումներու փոխանակութենէն ետքը երբեք չկասեցաւ ու յանդգնութիւնները այնքան առաջ տարաւ որ կամայ ակամայ ստիպուեցայ համակերպիլ որպէս զի չգուշակուէին յարաբերութիւններս : Ծնողքը հասկցած էին աղջկան անձկութիւնները, բայց կարծես աչք կը գոցէին : Քանի՛ քանի՛ անգամներ մայրը վրայ եկած ու չտեսնել կեղծելով մեկնած

էր : Միեւնոյն հիւրասիրութիւնը, միեւնոյն պատիւը : Մինչև կէս զիշեր գետեղերքը, պարտէզին մէջ, ուռենիին տակը, անուշ խօսակցութեան մը մէջ կը խորասուզուէինք ու կը վերադառնայինք հանգստանալու, ես իմ խուցս, ան իր մօրը քովը :

Ու կատակով մը կը հեզնէր շատ անգամ ըսելով .

— Ինչո՞ւ կը վախնաս, մի՛ քաշուիր ես քեզի կին չեմ ըլլար : Այդպիսի միութիւն մը մեզի երջանիկ չըներ : Ես լերան աղջիկ՝ լերան տղայ մը կուզեմ որ ապրիմ հետը : Ո՛չ քաղաք կ'երթամ, ո՛չ ալ կ'ուզեմ, ես չեմ սիրեմ ձեր կեռնքը, չեմ չլանար անոր վրայ : Սիրտը ուրեմն շեղումներ ունի, կը համակերպիմ պահ մը զգացումներուս . այսօր չափ : Իրաւ, կը սիրեմ քեզի ու բաժնուիլ ալ չեմ փափաքիր, բայց կը զգամ թէ երկուքնուս համար ալ, երկար չլիտի տեէ այդ հոսանքը որուն մատնուած եմ այսօր : Պարզ ժամանց մը, անկեղծ սիրուեալք մը, ահա՛ փափաքս : Ծնողքս վստահ են դեղեւումներուս մասին, գիտես թէ ինչպէս կը վերաբերուիմ գիմացինիս հետ, ու աչք կը գոցեն :

Տարօրինակ թուեցաւ ինծի այս յայտնուածութիւնը եւ իրաւ ալ տարօրինակ էր քանի որ սիրոյն սահման մը դրած ու զսպած էր զայն : Մինչդեռ անդին ես կը մտածէի միութեան մը անկարելիութիւնները հարթել ու ապրիլ Կարէնիս հետ :

Գեղին տղաքներէն գրեթէ մեծադոյն մասը թեկնածու էր իրեն, բայց ոչ մէկու մը ակնարկ մը կը նետէր : Գրեթէ ամէն օր խնամխօս կուգային . բայց հայրը չէր ուզեր հաւանիլ շուտ մը : Ծառ մը տղամարդերու նախանձը գրգռած էի : Ոմանք երեսիս կ'ըմէին «երանի՛ թէ քու տեղդ ըլլայինք» : Գեղեցկութիւնը, բնաւորութեան ազնուութիւնը, անուշ լեզուն իր վրայ կը ձգէին ամէնուն համակրանքը : Ոչ նուազ մատնանշելի յատկութիւն մըն ալ եթէ ունէր, ան ալ մօրը բնաւորութիւնը խրացուցած ըլլալն էր : Արդէն մայրը, Արուսեակ, մեծ համբաւ ունէր կա՛թի տէր տանտիկին մը ըլլալու : Աղջկանքը գացած տեղերնին իրենց մօրը

տեղը բռնած էին ու վատահ էին որ կարէնն ալ միեւնոյն յատկութիւններով օժտուած էր :

Ամրան տաքին , կարէն իր տպածոյ պարզ էնթարիովը զոր կը հանգրիճէր շնորհալիօրէն մետաքսեայ պարեգօտին , հմայիչ տեսքով մը չեմ գիտեր ինչպէ՛ս կըզգէիսէր զիս : Բոլոր հրապոյրները կանացի չքեղութիւններուն հետ խառնուած պիտի հալեցնէին զիս , եթէ երբեք չուենայի զինքը միշտ քովս , միշտ հետս : Յուլիսի այն տաք օրերուն ուր հեղցուցիչ էր արեւը , տունը գրեթէ մէկը չէր մնար : Արտը , կալը , հօտին քով կը ցրուէին ամէնքը ու ես առանձին կը մնայի խուցիս մէջ կարէնով որ իր զուարթ ու սրամիտ խօսուող տուքովը կը հրահրէր միշտ սիրտս : Յորեկուան ճաշիս ինքն ալ կ'ընկերանար , ու ինչպէ՛ս կուտէինք , ի՞նչ էր կերածնիս , չէինք գիտեր : Սե՛ր թէ սէր : Երկուքը միասին կըմոլանէինք անյադ : Այսչափ հրահրութեան մէջ գիրքն ալ ձեռքէ չէր իյնար , Ռաֆայիլի կէսը աւարտած ու սկսած էր հասկնալ : Մեր առանձնութիւններուն ամէնէն շատ նպաստողը գիրքը ու գիրն էր արդէն :

ՇՍ. ՀԱՐԻՆ

(Վերջին մասը յաջորդով)

Թ Ո Ք Ի Ո Յ Է Լ Ո Ն Տ Ո Ն

Երբ անգլիացի ընթերցող մը ձեռքը կ'առնէ իր առաւօտեան քսան փարանոց լրագիրը , ու հո՛ն կը կարդայ հեռագիրներ Թոքիոյի կամ Սէուլի «Մեր մասնաւոր պատերազմական թղթակցէն» վերնագիրներու տակ՝ քիչ անգամ թերեւս կը խորհի ա՛յն հրաշալի գործողութեան վրայ , որով կարելի կ'ըլլայ իրեն , իր գտնուած տեղը կարդալ ի՛նչ որ միայն քանի մը ժամ առաջ պատահած է աշխարհի միւս կողմը : Ու նոյնը չափով մը ճշմարիտ է մեզի համար ևս , երբ կը կարդանք պատերազմի թատրէն ուղղակի եկած հեռագիրներ , կամ անոնց արտասովոր թիւնները՝ եւրոպական օրաթերթերէ քաղուած :

Թոքիոյէն ճամբայ կ'ելլէ լուրը—հեռագիրը—և վեց հարիւր մղոն տեղ Գրթալէ վերջ կը հասնի Նակադաքի , ուսկից ընդձով հայ պարանիւն միջոցով կը ղրկուի Շանկայ , ասկէ ալ կայծակի արագութեամբ կը թռի Հոնկ—Քոնկ , Չինաստանի ծովեզերքը բոլորելով : Հոս նորէն ծովին տակը կը մտնէ և դուրս կ'ելլէ Սննամ , անկէ ալ Սինկաբուր անցնելու համար :

Հիմա՝ լուրը ճամբորդած է իբր 3,600 մղոն , սակայն կանգ չառնել , քանի որ տաս կաւին 9,000 մղոն ևս ունի վախճանին հասնելէ ստաջ : Մալաքքայի նեղուցէն և Պէնկալի ծոցէն կը սուրայ Մատրաս , կը ցատկէ Հնդկաստանի հարաւային կողմը , կը հասնի Պոմպայ և առանց հանգչելու կը խոյանայ Արաբական ծովի և Կարմիր ծովի խորութիւններէն ու կը հասնի Ադեբասդըրիս :

Տակաւին սակայն 3,000 մղոն ճամբայ ունի առջեւ : Ադեբասդըրիայէն կը ճամբորդէ Մալթա , անկէ Լիդպոն ու վերջապէս կանգ կ'առնէ Լոնտոնի մէջ : Այս ամբողջ ճամբորդութիւնը — 13,000 մղոն—կատարուած է իբր ութը ժամուան միջոցին . ասով մէկտեղ , իրականին մէջ՝ լուրը Լոնտոն կը հասնի ղրկուելէն ժամ մը առաջ , ինչ որ հարկաւ կը բացատրուի ժամացոյցներու տարբերութեամբ :

Այս հեռագրին ամէն մէկ բառը արժած է տասնըմէկուկէս դահեկան . եթէ սակայն անհատական հեռագիր մը ըլլար՝ ասոր եռապատիկը պիտի արժէր , քանի որ հեռագրական գիծերը այդ մասնաւոր զեղչը ըրած են լրագիրներու : Ասով մէկտեղ , երկու հարիւր բառէ բաղկացած հեռագիր մը մեզի կարդացնելու համար՝ թերթը վճարած կ'ըլլայ գրեթէ քսան անգլիական ոսկի :

Ու անգլիերէն թերթերու հեռագրի օրական ամբողջ ծախքը չէ որ կը ներկայացնէ այդ քսան ոսկին : Լոնտոնի օրաթերթերն առհասարակ օրական երկու հարիւր ոսկիի բացառիկ ծախք մը ունին լո՛կ հեռագիրներու համար զորս կըստանան իրենց պատերազմական թղթակիցներէն : Ասոնցմէ դուրս ալ անշուշտ վճարումներ կ'ընեն հեռագրական գործակա-

լուծիւններու; որոնք նմանապէս հեռագրեր կըտանան իրենց ներկայացուցիչներէն:

Մեծ է անտարակոյս հեռագիրին ծախքը. բայց ասիկա թերթին ընդհանուր ծախքին մէկ փոքր մասը կը ներկայացնէ դեռ: Առաջնակարգ օրաթերթ մը կ'ունենայ տասը տասներկու մասնաւոր թղթակիցներ, որոնք պատերազմիկ պետութիւններու զանազան կեդրոններուն մէջ ցանցնուած են: Ասոնց իւրաքանչիւրը՝ տարին 2,000 ոսկի կը նստի թերթին, և երբ պէտք ըլլայ մասնաւոր նաւեր վարձել, այն ատեն հարկաւ կ'աւելնան նաեւ մասնաւոր ծախքերը:

Ամերիկայի և Սպանիայի պատերազմին միջոցին, Նիւ-Յորք Հեթալսը շաբաթական 2,000 ոսկի կը վճարէր յատկապէս վարձուած լրատու նաւերու իր տորմէիկին համար. և խալմը ալ ամսական 2,000 ոսկի վճարած է մէկ նաւի մը համար, որպէս զի պատերազմի ընթացքին կարենայ հետեւիլ այդ եղանակով: Մասնաւոր թղթակիցներէ զատ, որոնք կրցածնուն չափ բո՛ւն պատերազմի թատրին մօտերը կը գտնուին, կան նաեւ թղթակիցներ գլխաւոր քաղաքներու կա՛մ կեդրոններու մէջ, որոնք միշտ չորս բացած են աչքերնին ու ականջնին՝ նոր լուր մը զրկելու համար իրենց թերթին:

Ինչքան ատեն որ թղթակից մը կը յաջողի լուր մը ամէնէն առաջ ինք հաղորդել իր թերթին՝ տրուած զրամը պարագ պացած չի նկատուիր. թերթը՝ թարմ լուրեր տալու համբաւ մը կը վայելէ: Կը պատահի ալ սակայն որ շատ կարեւոր ու շատ ալ ծախքոտ հեռագիր մը շատ ուշ հասնի թերթին, մինչդեռ այդ նոյն լուրը թէ՛ այդ թերթը և թէ՛ բոլոր ուրիշ թերթեր տպած են, տարբեր աղբիւրէ զայն ձեռք ձգելով: Ասոր մէկ որոշ օրինակը տեսնուեցաւ դեռ վերջերս. Լոնտոնեան օրաթերթի մը մէկ մասնաւոր թղթակիցը երկար հեռագիր մը քաշեց իր թերթին 200 ոսկի ծախքով: Հեռագիրը շատ կարեւոր էր արդարեւ և աւելին՝ իսկ կարժէր իր այժմութեամբը. եկո՛ւ տես սակայն որ դժբաղդաբար այդ նոյն լուրը հրատարակուած էր Լոնտոնի ճաբոնական դեսպանատան կողմէ, ուստի երկու հարիւր ոսկինոց հեռագիրը համբաւոր զամբիւղին մէջ նետուեցաւ:

X

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Խառն ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ ընդունելով Տ. Մուշեղ Մ. վարդապետի նախապէս տուած հրաժարականը Արարիկի թաղնորդութենէն, հաստատեց անոր ընտրութիւնը իրրեւ առաջնորդ Ատանայի:

Օրթագիւղի կկեղեցիին ու վարժարանին մատակարարութեան բայէն գոյացած 400 ոսկի պարտքը հայթայթելու համար Բերայի մէջ տրուելիք Նուադահանդէսին Կարգադիր Մասնախումբը, որուն նախագահութիւնն աղնուարար ստանձնած է Վսեմ. Սեպուհ պէյ Մաքսուտ, կազմուեցաւ հետեւեալ կերպով. Տեարք՝ Արսլանեան Յարութիւն, Գայսէրեան Սիմօն, Գարամանեան Յարութիւն, Նուսուֆեան Յովսէփ, Հարենց Մաքսուտ, Հիւրմիւզ Արտաշէս, Մանուկեան Մկրտիչ, Յակոբեան Դրիգոր, Նորատունկեան Միքայէլ: Օրթագիւղի նման կրթական փայլուն անցեալ մը ունեցող թաղի մը ի նպաստ սարքուած սոյն երաժշտական ցերեկոյթը տարակոյս չունինք որ արդիւնաւոր ընելու համար թէ՛ Օրթագիւղի ազգայինները և թէ՛ անկէ մեկնողները հաւասարապէս չպիտի զլանան իրենց աջակցութիւնը ու նպաստը: Մանգումէի Էմեհար օրաթերթը նախորդ շաբթու բոլորեց իր երրորդ տարեշջանը ու չորրորդը թեւակոխեց, որուն աւթիւ ձօխ թիւ մը հրատարակած էր՝ խմբագրական յայտարարութեամբ մը: Կը չնորհաւորենք մեր պաշտօնակիցը իր յարաճուն յաջողութեանը ու դտած համակիր բնդունելութեանը համար որուն ամէն կերպով արժանի է, և փայլուն յարատեւութիւն մը կը մաղթենք իրեն:

Պատրիարքարանի յարաբերական դիւանի տեսուչ Կարապետ էֆ. Խաչատուրեան բոլորովին ազաքինած ըլլալով, իր պաշտօնին գլուխը անցաւ:

Ձապի տօներէն ետքը, Տ. Մամբրէ եպիսկ. Մարկոսեան Երեսօղեմէն մեկնեց է Երիքով, ժամանակ մը մեկուսացած ապրելու համար՝ ինչպէս մեկուսացաւ անցեալ տարի Ռէմէի վանքը:

Ս. Պատրիարք Հայրը անցեալ կիրակի պատարագեց և քարոզեց խառնուրդի Ս. Ստեփաննոս եկեղեցին որուն տօնախմբութիւնն էր, և Թաղ. Խորհուրդի ատենապետ Շահպաղ Նղիս էֆ. ի բնակարանը գլխերելով յաջորդ օրը յատկապէս զբաղեցաւ Ս. Ներսէսեան վարժարանին և Գալֆաեան Որբանոցին վերաշինութեան վերաբերեալ խորհրդակցութիւններով: Ն. Սրբազնութիւնը յաջորդաբար այցելեց այդ երկու կրթական հաստատութիւնները որոնց աշակերտներուն ու աշակերտուհիներուն յորդորականներ խօսեցաւ: Ճարտարապետ Մելիտոսեան էֆ. ի, Թաղ. Խորհուրդի անդամներուն և Խնամակալուհի Տիկնանց հետ իր կատարած կարծիքներու փոխանակութեան հետեւանքով, Ս. Պատրիարքը յանգեցաւ սա որոշման, թէ Ս. Ներսէսեան վարժարանը պէտք է ի հիմանէ վերաշինել քարալէն՝ Էսսեան վարժարանին ոճով և մանչերու ու աղջիկներու յատուկ բաժանումներով: Ծախքը կը հաշուուի 1700 ոսկի որուն 1500 ոսկին պատրաստ է արդէն չնորհիւ Թորոս էֆ. Բարադամեանի բարեսիրական նուիրատուութեան: Մնացեալը պիտի հոգացուի հանգանակութեամբ: Իսկ Գալֆայեան Որբանոցը մասնակի նորոգութիւններ պիտի կրէ՝ 700 ոսկի ծախքով որուն 500 ոսկին միայն տրամադրելի է:

Հայ-Հռոմեակաւանց հանդուցեալ Կ.— Պատրիարք Ս. Պողոս Ս. Էմմանուէլեանի յուղարկաւորութիւնը արժանավայել հանդիսաւորութեամբ կատարուեցաւ անցեալ կիրակի, յոգանիսուն բաղմութեան մը ներկայութեամբ որ եկեղեցիէն դուրս՝ շրջակայ փողոցներն ալ լեցուած էր: Առաւօտուն, Պատր. Տեղապահ Ս. Աւետիս արքեպիսկ. Արքիարքեան Պատարագ մատոյց Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ, ուր ներկայ էին՝ Հայ Հռոմէական կղերէն և զանազան միաբանութեանց ներկայացուցիչներէ զատ՝ պապական նուիրակին փոխանորդը և պաշտօնական անձնաւորութիւններ: Պատարագէն վերջ, դամբանականը խօսեցաւ Հաճեան Գերապայժառ և հոգեհանգստեան արարողութիւններ կատարուեցան: Յետոյ, մեծ թա-

փօր մը կազմուելով՝ դադարը տարուեցաւ Ս. Յովհան Ոսկեբերան եկեղեցին ուր կը դանուէր արդէն խուռն բաղմութիւն մը. մեր Ս. Պատրիարքին կողմէ ներկայ էր Փոխանորդ Սրբազանը. նոյնպէս Յունաց Պատրիարքին և Պուլիարաց Էկզարքին Փոխանորդները, Բողոքականաց Ազգապետը, պաշտօնատարներ և ղեկավարատանց ներկայացուցիչներ: Հոն ևս արարողութիւն կատարուելէ ետքը, Կ.— Պատրիարքին մարմինը մեռելակիր քառածի կառքով մը փոխադրուեցաւ Շիշլիի Հայ-Հռոմէականաց գերեզմանատունը ուր ամփոփուեցաւ եկեղեցականաց յատուկ թաղին մէջ:

Տրապիզոնի առաջնորդական տեղապահութիւնը յանձնուեցաւ Բաբերդի տեղապահ Ս. Արիստակէս Վրդ. ին, որ գոհացուցիչ պաշտօնավարութիւն մը ունեցած է իր քանի մը տարիէ ի վեր վարած հոգեւոր հովուութեան մէջ: Իսկ Բաբերդի առաջն. տեղապահ կարգուեցաւ Ս. Դէորդ Վրդ. Իզրանոսեան որ պաշտօն մը կը խնդրէր Պատրիարքարանէն: Նոյնպէս, Արաբկիրի և Ակնայ առաջն. տեղապահ կարգուեցաւ՝ Խառն Ժողովին որոշմամբ՝ Ս. Դուռնդ Վրդ. Դուրեան:

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈԻՐԵԱՆ

ԲԱՐԵՂԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ

Կը դարմանէ տղայոց հիւանդութիւնները (նեքքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ականջի և կոկորդի գործողութիւններ:

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փողոց Բրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12.

Արսոմասկ Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէ՛քը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառ. բաւելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տակոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվատա, Ղալաթիա,

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատ. կութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Աքէռի տարրալուծած է զայն եւ Թալալէլի ու Գանլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգեալով որ անոր ջրաչափական աստիճանը 1⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ. չիշերը աւ տակառները հոն լեցուելով ու զմռսուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր աւ անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Ծաննիէզաւ հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տաւրա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուլի, Զէրրի, Սթէքուլի, Ալիլիւանօ, Մալի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Գարաքովօքի, Բլէմօլ, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲերԱ, Մեծ-Փողօց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պալը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դառ, Գարաքովաքի ջուր: Դիները շատ աժան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չիլ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով աւ Թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

ՏՕՔԹ. Ժ. ԿԱԼԷՊ

Մասնագէտ միզանցքալին հիւանդու-
թեանց: Վկայեալ Վիէննայի բժշկական Հա-
մալսարանէն եւ Բարիզի ու Պէրլինի հիւան-
դանոցներուն մէջ գործնական փորձեր կա-
տարած, կը դարձանէ իրեն դիմող հիւանդ-
ները՝ գիտական նորագոյն մէթոտներու հա-
մաձայն: Հասցէ՝ Բերա, Թիւնէլի Բասաթին
դէմ, Եէմէիֆի փողոց. Թ. 31:

2—12


ԳՐԻԴՈՐ ՄԱՐԴԱՐԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատկերազարդ ընդարձակ Աշխար-
հագրութիւն. բարձրագոյն դասընթացք.—
Դին 6 շրջ.

2. Պատկերազարդ Աշխարհագրութիւն
եւ Տեղագրութիւն Կ. Պոլսոյ. Տարր. դա-
սընթացք.— Դին 2 1/2 շրջ.

3. Պատկերազարդ Աշխարհագրութիւն.
Միջին դասընթացք. գին 3 շրջ.

Կը գտնուին բոլոր գրաւթաւոց քով
եւ կը ծախուին գոհացուցիչ գեղչով:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝
ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճա-
րատանց մէջ:

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ

- | | | |
|----------|---|--|
| ԲԱՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ: |
| ԿԱԼԱԹ.Ս. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՍԱՐ | | 2արշը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր փաղաներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵՍԼ ԱՊՍՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՏՕԲԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, աւելեւ Բաղիզի բժշկական համաժողովին:—Մասնագէտ՝ արեանց եւ կանանց՝ ծննդական գործարաններու հիւանդութեանց:—Պատուոյ վկայագիր ունի Պէրլինի, Լօնտոնի, Բեռլինի եւ Եւրոպայի Վերմերու Ակադեմիաներէն:—Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակ իր մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունին՝ Պոլսոյ կողմէ կամ մօրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ Բերա, Թաքսիմ, Փրատնական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բամբ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, որոնք ամբան եղանակին յարմարագոյն ըմպելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիւն:

Կ. Պոլիս, Պահէ Գալու, Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



ՏՕԲԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթային ախտերու Բերա, Սերգիս փողոց, Թ. 20
(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիեննայի Համալսարանէն ուր ուսած է տասնըմէկ տարի, միեւնոյն տան իբր օգնական-բժիշկ ծառայած ըլլալով Բրօք. Նաւմանի, Բաքօսիի եւ Տիֆֆէլի գաղանի հիւանդութեանց յատուկ քլինիքներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ մորթային ախտերէ տառապողները կ'ընդունին զոքս կը բժշկէ նորագոյն եւ կատարելագործեալ մէթոտներու համաձայն: Իր մասնագիտութենէն դուրս՝ օրեւէ հիւանդ չընդունէ իր:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵՊ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուն ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. Ուր. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Իրակի օրերը ժամադրութեամբ